

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ

ՏԱՊԱՆԱԳԻՐՆԵՐԸ



Կ. Պոսոյ Հայ Պատրիարքներու պատմութեան շրջոցիչ մէկ մասն են անոնց Տապանագիրները, որոնք՝ մեծ մասամբ գոյարիան շունիկն այլևս: Իմ բժշկա-բանասիրական ձեռագրութիւններուս միջոցին, հազիւ թէ անոնցմէ 28 հատ մը կրցած եմ գտնել. կարևոր կը համարիմ իրենց բնութեաններուն կարգաւ հրատարակութեան տայ գտնուել, հետզհետեւ անցի հիներն այ ձեռք կարենայ բերելու յոյսով:

Ա.

ԽՈՒԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ

Թաղուած է Հոռմի Ս. Մարիամ Եղիպտացի Եկեղեցիին մէջ և ունի Հայերէն — Լատիներէն Տապանագիր մը այսպէս.

Ի ներքոյ յայտըմ՝ վիմի
Եղեալ մարմին Յովհաննէսի
Հովիւ Հայր և Առաջնորդի
Երանելի Քա, և Հոռտորի
Աստուածաբան վարդապետի
Մեծ քաղաքի Ստամպոլի
Յաղթող և հզօր Պատրիարքի.
Անցեալ աուրբք ութսուն ամի
Եկեալ հասեալ այս սուրբ տեղի
Հնազանդեցաւ սրբոյն Բաբի
Ութերորդ մեծ Ուռբանի
Լցեալ զփափաք իւրոյ սըրտի
Հանգեաւ յաստուած փառօք հոգի
Ի թուականին մեծ Հայոց Ազգի
Հազար ութսուն և երեքի
Յունիս ամսոյ տասն և երեքի:

Խուլ Յովհաննէս Պատրիարք վախճանած կ'ըլլայ ուրեմն Հայոց 1083 թուին և Քրիստոսի (1083 + 551 =) 1634 թուականին: Սոյն Տապանագիրը հրատարակած է ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ 1911 յունվար, էջ 24: